Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
Հովիւ
Արժ. Տ. Սարգիս Քհ. Գաշըգճեան



St. Gregory The Illuminator
Armenian Church
6700 W. DIVERSEY AVENUE
CHICAGO, ILLINOIS 60635
PHONE 637-1711
REV. FR. SARKIS KASHIKJIAN, PASTOR

Մարտ 6,1967

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Եպկ.Մանուկեան
Առաջնորդ Հայոց Հիւս.Ամերիկայի
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Շիքակոյի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Հայց.Եկեղեցւոյ Տարեկան Անդամական ժողովը գումարուեցաւ, Փետր. 24,1967,Ուրբաթ երեկոյեան ժամը 8.30-ին,եկեղեցւոյս ժողովասրահին մէջ,ներկայութեան 37 քուէարկող անդամներու:

Ծխական Խորհուրդի նոր անդամներ ընտրուեցան հետեւեալներ.

Պրք. Բիթըր Գլուճեան 30 քուէով
Ճէք Մաթէոսեան 28 ,,
Րոպըրթ Գալէնեան 30 ,,
Վիլիամ Թութուեան 29 ,,
Նիշան Պապիկեան 25 ,,

Պր. Խոսրով Յովսէփեան, որպէս յաջորդ առաւելագոյն քուէ ստացող -24- կը մնայ անձնափոխանորդ:

Կը խնդրենք Ձերդ Սրբազնութենէն,որպէսզի վաւերացնէք սոյն ընտրութիւնները կարենալ շուտափոյթ ամբողջացնելու համար դիւանի կազմը:

Կանխայայտ շնորհակալութեամբ կը մաղթենք Ձեզ օգտաշատ եւ արեւշատ առողջ կեանք:

Մատչիմ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն
Մնամ
Որդիական սիրով եւ Յարգանօք

Սարգիս ՔՀՆյ.Գաշըգճեան